ԱԶԳԱՅԻՆ

Թիֆլիզի Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը խընդրում է խմբագրութիւնից տպագրել «Արարատ»-ի էջերում հետևեալը։

Իսկական պետական խորհրդականի ամուսին Նունէ Ղամբարեանը՝ ցանկանալով յորդորել Թիֆլիզի Ներսիսեան Դպրոցի և Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի սաներին, աւարտելուց յետոյ շարունակելու գործել գրականական ասպարիզում և միևնոյն ժամանակ վարձատրել նոցա գրականական գիտական առաջին աշխատողները՝ Կովկասի և Փոքր-Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան ուսումնասիրութեան վերաբերութեամբ։ Նուիրել է յօգուտ Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի էրէ։ հաշիւ ---բէլ 4% արժեթղթերով և խնդրել է գործադրել հետևեալ կերպով։

1. Այդ նուէրը պէտք է լինի անձեռնմխելի մայր գումար, որից գոյանալիք տոկոսներից, որ չորս տարուայ ընթացքում կը հասնի մօտ հինգ հարիւր ռուբլու, ամեն չորս տարին մի անգամ պէտք է տրուի էրէ-դրդ-ն-ի։ առաջինը մօտ չորս հարիւր ռուբլի և երկրորդը հարիւր ռուբլի՝ իբր վարձատրութիւն հայոց լեզուով գրած ամենաընտիր աշխատութիւնների Կովկասի և Փոքր-Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան մասին։

2. Մրցանակաբաշխութեան մասնակցելու թոյլ է տրվում Ներսիսեան Դպրոցի և Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի այն ուսումնաւարտ սաներին, որոնք այդ օրից գոնեայ հինգ տարի --- աւարտել իւրեանց ուսման ընթացքը։

3. Մրցանակները բաշխելու համար կազմվում է հինգ հոգուց բաղկացած մի մասնախումբ, որի անդամներին ընտրում է Ներսիսեան Հոգևոր Դպրոցի ուսուցչական ընդհանուր ժողովը՝ [illegible]։

Ծանօթ։ Նուիրատու տիկինը ցանկութիւն է յայտնում որ գոնեայ երկու անդամները ընտրուէին մասնաւոր հեղինակաւոր անձինքներից։

Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութիւնը խորին շնորհակալութեամբ ընդունելով տիկին Նունէ Ղամբարեանի նուիրած երեք հազար ռուբլին, համաձայն նուիրատու տիկնոջ առաջարկեալ ցանկութեանը գործադրելու պայմանով, որոշել է՝ այդ գումարը գրել մուտք հաստատուն գումարների մատենում և դնել Թիֆլիզի արքունական բանկը ի պահպանութիւն։

Խմբագրութիւնս ծանուցանելով այս մասին ի գիտութիւն հայ հասարակութեան, սեպուհ պարտք է համարում յայտնել մեծարելի տիկին

Նունէ Ղամբարեանին իւր ջերմ համակրանաց հաւաստիքը այսպիսի գովելի նպատակով արած նուիրաբերութեան համար։ Թէ յորդոր և թէ միանգամայն խրախոյս է այս նուիրաբերութիւնը՝ Մայր աթոռոյս Հոգևոր ճեմարանի և Ներսիսեան Դպրոցի ուսումնաւարտ սաների համար պարապելու Կովկասի և Փոքր-Ասիայի ազգերի վերաբերեալ պատմական, գրականական և ազգագրական ուսումնասիրութեամբ։ Սիրելի է յուսալ, որ մրցանակաբաշխութեան մասնակցելու արտօնութիւն վայելող մեր երիտասարդութիւնը կը ներկայանայ մրցանակաբաշխութեան հանդէսներին գիտական արժէք ունեցող արժանաւոր երկասիրութիւններով, որով լիուլի կատարուած կը լինի մեծարելի տիկնոջ բարի բաղձանքը և այս գործի յաջողութիւնը հետևողներ առաջ կը բերէ՝ սորա նման գեղեցիկ նպատակներով նուիրաբերութիւններ անելու։